



ՏՆՕՐԷՆ-ԻՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ


Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 45

ՀԱՐԱԹ

7 ՅՈՒԼԻՍ 1907

Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ

Ջ Ե Ն Ի Թ
Ջ Ե Ն Ի Թ
Ջ Ե Ն Ի Թ
Ջ Ե Ն Ի Թ
Ջ Ե Ն Ի Թ
Ջ Ե Ն Ի Թ
Ջ Ե Ն Ի Թ
Ջ Ե Ն Ի Թ
Ջ Ե Ն Ի Թ
Ջ Ե Ն Ի Թ



Ջ Ե Ն Ի Թ

ՄԵԾ ՄՐՑԱՆԱԿ ԲԱՐԻՋ, 1900

ԱՌԱՋԻՆ ՄՐՑԱՆԱԿ. — Նեոստիլի դիստրիբյուտ. 1903
ԱՐՏԱՔՈՑ ՄՐՑԱՆԱԿ. — Անդամ ժուրիի Միլան. 1906
ԵԻՆ. ԵԻՆ. ԵԻՆ.

ԱՄԷՆ ՄԵՏԱՂԷ ԵՒ ԱՄԷՆ ՄԵԾՈՒԹԵԱՄԲ

ԸՆԴՀ. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՋԻԹ ԹՈՒՐԳԻՈՑ ՀԱՄԱՐ

Գ. ՍԱՐԳԻՍՅԱՆ ԵՒ ԸՆԿ.

Մեծ վաճառատուն ժամացույցներու, շրթա-
ներու եւ գոհարեղէններու

ԹԻԻ 16 = ՊԱՀՃԷ-ԳԱՐՈՒ = ԹԻԻ 16

Օռոզար-Պաք հաստատութեան ղեկավար

Ի Բերա, Կ'գտնուի զոհարարվածաւ Տ. Տ. ԷՐՄԷՔՃԵԱՆ ԵՂԲԱՐՅ քով,

Թիւ 400 Մեծ-փողոց

Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ


Ջ Ե Ն Ի Թ
Ջ Ե Ն Ի Թ
Ջ Ե Ն Ի Թ
Ջ Ե Ն Ի Թ
Ջ Ե Ն Ի Թ
Ջ Ե Ն Ի Թ
Ջ Ե Ն Ի Թ
Ջ Ե Ն Ի Թ
Ջ Ե Ն Ի Թ
Ջ Ե Ն Ի Թ

(آ. آصاڤوربان) شرکت صنیعہ مطبعہ — باب عالی جادہ سندہ نومبر ۱۹۰۷

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պաշտ-Ալի հաստատութիւն թիւ 52

Հատը 40 փարա



Չէ՛նք, ոսկի ու ոսկի եւ ձեռքի
 Քիանգամայն մեհնաներ
 կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կտրի մեքենայի մնայ,
 բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
 մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
 ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
 եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Ե Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅԺ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարեւոր զործուածը,
 հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

ձեջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՇԱՐԼՈՒԿԱՆ
 ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

- | | |
|----------------|--|
| ԲԵՐԱ | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկէր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համամ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԵԻՒՏԱՐ | Չարշը Պօյու , թիւ 120 . |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաճիւղեր գաւառներու բոլոր ֆաղսֆներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա , Մեծ փողոց , թիւ 343 եւ 343 կրկին , Տիւզօղլուի տունը :



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԱ. ՏԱՐԻ ԹԻԻ 45

ՇԱՐԱԹ

7 ՅՈՒՆԻՍ 1907

ՍԻՆԱՆԵԱՆ-ՄՍԸՐԼԵԱՆ

ԲԱՆԱՎԷՃԸ

Արեւելք և Մանգոլիա ժամանակէ մը ի վեր կը հիւրընկալեն գեղարուեստական բանավէճ մը որ կը մղեն երկու ախոյեանները՝ Սինանեան և Մսըրլեան։

Թէ ուստի ծագում առաւ այս երկուքին միջեւ տակաւ հրահրուող գրամարտը, պարզենք երկու տողի մէջ։

Մսըրլեան ի վաղուց կը փափաքեր մասնակցիլ Ազգ. Հիւանդանոցի տարեկան նուագահանդէսներուն, և չեմ գիտեր ի՞նչ պատճառաւ մասնախմբին կողմէ կը մերժուեր, և այդպէսով իր փափաքը անիրագործելի կը դառնար ու կը վհատեր։

Ասկէ մի քանի ամիսներ առաջ, իրեն համակիր բարեկամներու դրդմամբ, փորձեց առանձին նուագահանդէս մը

կազմակերպել, որով պիտի կարենար յազուրդ տալ իր ներքին փափաքին և նիւթապէս պիտի օգտուէր ալ։

Հանդէսին օրը ինչպէս շատ մը amateurներ և հրաւիրեալներ, ես ալ պատեհութիւնը ունեցայ գտնուելու և մօտէն լսելու այն թագուն և հուրարժած տաղանդին արտադրութիւնները և կարողութիւնը որ... կոշկակարն ցկոյիկն կ'ըսէ առաժը, ու մենք չենք ուզեր անկէ վեր ելլալ քանի որ արուեստագէտ մը չենք։

Այդ օրը, ինչպէս ուրիշ արուեստագէտներ, Յ. Սինանեանն ալ հող էր և ուշի ուշով կը հետեւէր զարնուած կտորներուն, որոնց համար — միշտ լսողաց — կըսէին թէ գժուարին են և գեղեցիկ։

Մսրրլեան յաշորդաբար կը զարնեիր իր յայտագրին մօռսօները, և ժողովուրդը կ'ունկնդրեր անշուկ, անշուշտ քննադատական խիստ փոթորիկ մը հանելու մտադրութեամբ:

Եւ որ չուշացաւ:

Նախալարձակը եղաւ Ենովք Արմեն: Մասիսի մէջ քրոնիկով մը ձաղկեց Մսրրլեանի նուագահանդէսը, և կարգ մը amateurի դիտողութիւններով յայտնեց թէ՛ դեռ ատենը չէր Մսրրլեանի Բերայի մէջ *fohukh* տալուն, քանի որ իր արժանիքը և հմտութիւնը չէր ներեր այդ յանդուքն գործը հարիւրաւոր արուեստագէտներու հրամցնել, թէեւ նպատակն էր կլորիկ գումար մը չինել իր զաւկին ապագային համար:

Եւ Արմենի այդ կճուկը, առիթ տուաւ կեղծ ստորագրութեան մը երեւումին շաբաթաթերթ Ծաղիկի մէջ, բոլորովին օտար մը գեղարուեստին, և որ սակայն ճշմարիտ բառի բռնով մը վեր ուղած էր հանել Մսրրլեանի արժանիքը *virtiose* անունը տալու չափ յառաջ երթալով, բան մը՝ ուրկէ առնուած ըլլալու է Մսրրլեան, իբրեւ անաչառ արուեստագէտ, քանի որ այդ մակարդակը իրը չէ տակաւին:

Կարգ մը բարեկամներու թելադրութեամբ, ամիս մը վերջ Յ. Սինանեան, առանց ո՛ր եւ է անձնական հակառակութիւն մը տածելու Մսրրլեանի դէմ, բան մը՝ զոր մօտէն գիտենք, օրաթերթի մը մէջ արուեստագիտական փաստերով յայտնեց իր կարծիքը, մէջտեղ դնելով կարգ մը սխալներ, որոնք գործուած էին քօնսէսին օրը զարնուած կտորներուն մէջ, և յորդորած էր քօնսէսատուն, որպէս զի սերիշ առթիւ լաւ պատրաստուած ներկայանայ հանրութեան:

Այս մէկ քանի անաչառ դիտողութիւններուն ի լուր, Մսրրլեան կը փոփոքի, կը փրփրի և նախանձի վերագրելով գեղարուեստական այդ գըրուածքը, կը պատասխանէ և կարգ մը բացէն՝ նիւթէն բոլորովին դուրս առնէրթոտներով, ջրել կը փորձէ իրեն դէմ գրուածքը:

Ու ալ Սինանեան-Մսրրլեան գրավէճը կը շարունակուի մինչեւ հոն՝ ուր Մսրրլեան ասպարէզ կը կարգայ իր հակառակորդին, ժիւռիի մը ներկայութեան չափուիլ և վաւերացնել իր *virtiose* մը ըլլալը:

Պատմութիւնը հոս կը լրանայ և կը մնայ երկուքին համար ալ մեր սնուցած գաղափարը պարզել:

Ո՛չ մին՝ ո՛չ միւսը կուզենք պաշտպանել, ոչ միոյն՝ ոչ ալ միւսին հետ ազգականութիւն և կամ խնամութիւն մը ունինք, ոչ մէկուն և ոչ ալ միւսին կուզենք թշնամութիւն մը սնուցանել, այլ կուզենք, իբր անաչառ քննադատ՝ դասաւորում մը դնել երկուքին կարողութեանը վրայօք:

Յ. Սինանեան, մին է այն կարող արուեստագէտներէն, որ կրցած է տալ իրենց փորձառութեամբ և արուեստին սիրոյն հասնիլ այն կէտին՝ ուր այսօր պսակուած է մայիսոս տիտղոսով, զոր չեն զլանար անունին կցել բոլոր Կ. Պոլսոյ օտարազգի վարպետները: Harmonie, orchestration, composition, ահա երեք առաւելութիւններ, զորս կրցած է իւրացնել և անոնց շնորհիւ իր ձայնագիր տետրակները ձեռքէ ձեռք կը խլուին ընտանեկան Հայ-Լայֆ սալօններու մէջ:

Մսրրլեան, ինքն ալ յարատեւ *étudiant* չութակի, իր հանրածանօթ և համբերատար աշխատութեամբ կըր-

ցած է յառաջընթացը և զարնել բաւական դժուար կտորներ ճիշդ և ներդաշնակ: Իր compositionներէն մէկ քանին սա գաղաբարը կազմել տուած են իր վրայ թէ՛ ինքը ապագային պիտի ըլլայ, այս օրուան ցոյց տուած կարողութեամբը, սակայն ֆօնֆուրիսք և վիտրիոզ տիտղոսները քիչ մը կանուխ տրուած են իրեն:

Իրականութեան մէջ ծաղրելի է սա առաջարկը թէ՛ Մարըլեանի սովորած կրտորները Սինանեանն ալ զարնէ Ժիւռիին ներկայութեան, արդէն այդ ֆօնֆուրի գաղափարն ալ ոչ նուազ տղայական է, ըստ մեզ, սակայն աւելի լաւ և վրճաւական պիտի ըլլար, երբ ընդունուէր հետեւեալ առաջարկը.

1. — Նախ՝ Սինանեանը չի հանել Մարըլեանի մը դէմ:

2. — Եթէ հարկ ըլլայ չափուիլ իրարու հետ, ինչ որ անտեղի է, երկուքին ալ զարնել տալ այն կտորները՝ զորս Ժիւռիին պիտի որոշէր:

3. — Այդ օրուան ֆօնֆուրիսք, քօնսէնի հով մը տալով, մօտաքը քառորդ ոսկի մը ընել և հասոյթը յատկացնել Գալֆանեան որբանոցին:

Ահա մեր կարծիքը:

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ

ԻՆՉՈՒ ԿԱՄՈՒՍՆԱՆԱՆ

Յրանսուհին կամուսնանայ օրինաւոր սիրող մը ունենալու համար ... ի բացակայութեան ապօրինիներու:

Անկուհին կընէ չընէր կամուսնանայ, որովհետեւ տունը մնացած Անգլիացի աղջկան պէս տգեղ բան չկայ աշխարհիս վրայ. զիտած էք:

Գերմանուհին կամուսնանայ պտղտիկ Գերմաններ չինելու համար:

Ամերիկուհին ... հետաքրքրութեան համար:

Սպանուհին՝ որովհետեւ ամուսնանալը համով է:

Իտալուհին՝ միմիայն երբեմն էրկանը հետ իյնալու հաճոյքը ունենալու համար:

Ռուս կինը կամուսնանայ որովհետեւ կին ըլլալը՝ աղջիկ ըլլալէն աղէկ է, այնպէս չէ:

Հելլենուհին կամուսնանայ՝ իր էրկանը հետ աշխատելու համար ի հարկին:

Իսկ հայուհին կամուսնանայ իրաւ որ, ինքն ալ չի գիտեր ինչո՞ւ համար:

Բայց ինձ այնպէս կուգայ թէ՛ ասոնց մէջէն ալ Իզմիրցի Հայուհին կամուսնանայ, որովհետեւ Աստուած ասանկ կուզէ, և Պոլսուհին՝ որովհետեւ աղապան անանկ կ'ըսէ կոր:

Այս վերջիններուն մէջ ալ ստորաբաժանումներ կան:

Պոլսեցի աղջիկը երբ աղքատ է՝ էրիկ մը կուզէ տունէն խալըսելու համար:

Մէկ երկու հարիւր ոսկի ունեցողը՝ ամուսնը Սարդար Եազըրի երթալու համար:

Երեքէն հինգ հարիւր ունեցողը էրկանը գլխուն դժբաղդութիւն մը բերելու համար պարզապէս:

Հազար ոսկի ունեցողը՝ Պոլսոյ ամբողջ երիտասարդներուն ճախա ընելու և անոնց վրայ խնդալու համար:

Իսկ անոնք որ՝ քանի մը հազար ունին, կամուսնանան ձեռքովին դժբաղդ ըլլալու համար կարծես, մեղք:

Սակայն ամենէն ցաւալին այն է որ, մեր աղջիկները դասաւորելու համար ստիպուած եմ որակը մոռնալ բանակը յիշելու համար:

Ամէն պարագայի մէջ ամուսնութիւնը ինձ համար երկու հոգիներու գումարում մ'է, հանգստութեան բարձում մը, հոգերու բազմապատկութիւն մը, և երջանկութենէ ... բաժանում մը:

Աւելի կարճը կուզէք:

Ամուսնութիւնը՝ կաւելցնէ կին մը և էրիկ մարդ մը կը պակսեցնէ:

Չէ՞ք հաւատար, փորձի համար ամուսնացէք և պիտի գտնէք թէ՛ հակառակ ամէն ըսուածին՝ ամուսնութեան պէս անուշ բան չի կայ, գոնէ այսպէս կերեւակային ... ամուսնիները:

Յ. ՍԼՓԻԱՐ

Ե Ա Ն Գ Օ

[ԾՈՂՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԸ]

ՄԱՀ ՅՐԳԵԼԻՆ

Աստուած ինձ տուաւ զղալի կարմիր, կըլոր,
կունդ:
Եւ մերք ընդ մերք յանձին իմում հարցնէի՝
Իմ կոհակներս քե՛զ աւակներս աւելի
Կը սիրէի: Միայն, յուզմամբ տեսայ միտ,
Թէ անպատում սէր մ'ունէր մայրն իմ

անմիտ

Իր բոռանց վրայ, ոյց հանին եր ու տատան.
Մամուն ձեռով լ'երգով որբանն եր տատան:
Անմիտ, այո՛. լ'այնպէ՛ս մեռաւ փաղցրիկ
մայրս.

Ձայն ի սեւ հող կանխեց բարի, համեղ հայրս,
Մին ի բոռանց...անդրանի՛կս...որոյ խենդն եր:
Չապրեցաւ շատ, զընաց զքսնել նինքն ծեր...:
Երբեմն աչէս զլորի խոտը հոծ կարիլ
Ի ջուրս, եւ ծով քրի ՝նձ ուռիլ եւ խորհի՛...
Այլ անիծել չեմ եւ երբեք փորձուեր
Բաղդս կամ երկինքն. ոգի՛ տան ինձ կոհակներ:

Հ Ի Դ Ե Հ Ն

Որդւոյն մահէն յետոյ փոքրիկ պատահար
Վերդովեցին լոկ նաւագին խաղաղ կեանք:
Այլ անա՛...մեծ պատուհաս մը սոսկալի
Հասաւ, յանին յաւեր դարձուց Պոստորի
Գիւղն ա՛յն, ուր մեր կեայ նաւաւար փաշա-
լաւ:

Գուզկուննուզի թանայի՛ր եր...հովն յարեաւ,
Հով՝ սասկապոյնն հիւսիսորդւոց՝ քս գրոյն.
Եւ աղաղակ, կականք. «Հըրդէհ. փորկու-
քի՛ն:»

Տուն ու խանութ, եկեղեցիք ու դպրոց,
Ջարդ ու անօթ, ճրագ ու փունջ ու խըն-
կոց,

Ու կամարներ ի ձեւ գօտւոյն ծիրանի,
Որոց ներքեւ շրջաւ գօտեաց ծածանի՛,
Ի գոյն միակ, ի ձեւ զխնուր ալանդակ
Վերածեցան ամենեքին հասարակ
Եանգօն՝ առտուն՝ տան կարասեաց մօտ զքսաւ
Կինն որ կուլար: Ջոյգ դուռ, սրնուկ մ'ու
կքաւ:

Որքան պէտք եր պզտիկին տակ փոխելու.
Ահա՛ ինչ որ մընար տունէն: «Ուտելու
Բան մը չը կա՛յ.» հարցուց նաւագն անայլալ

Կընդուն, որ լայր եւ չէր տուներ ինչ ոչ ալ:
«Դիւերն ի բուն անօթի եմ. չը կա՛յ բան.
Անօթի չե՛ս դու, կի՛ն բարի,» Բաղդրաբան
Այլ եւ ազդու եանգօն բանալ տուաւ զսրն-
ուկ.

Ուրկից ելաւ միս, կարկանդակ, աղած ձուկ,
Բանայի՛րն քա՛ծ էին կերակուր.

Կերաւ նաւագն, լուրախ, — լիւեր նա զիւր
կուր,—

Մինչ հեգ իւր կին՝ ծով՝ լայր, հեծէր ու
հարցնէր.

«Այժմ ի՛նչ ընենք, մենք ո՛ւր պառկինք այս
գիւեր:»

—Ո՛ւր մի պառկինք. կ'երթանք հայրն.
հոն ծով ալ...»

—«Եայր՛ն որն է.» կինն ընդմիջեց կազդուր-
եալ.

—Ո՛ր հայրն. մե՛րն.» —«Ի՛նչ կ'ըսես, մա՛րդ»
գոչեց կին

Կես խելայեղ. «Եայր չունի՛մ ես սասկին...»
Նաւաւարին մեծ յանախորդաց մեկը՝
Դիւերն քա՛ծ եր եանգօյին. «Ե՛լ, եկը՛
Եայրլին մեկ անկիւնն նրսէ՛. մեծ է Տեր.
Հարկաւ կ'ըլլաս օր մը նորէն տունի տէր:»

[ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, ՆՈՐ ՏՈՒՆ

Իբեւ քե բնաւ չունէր կորուստ, եր անհոգ
Քաջ նաւաւարն՝ օժտեալ սրբիւ ու խելօ:
Հարուստ եր նա, ցորեան իր տեղն եր մեծ ծով,
Ցորեան դասակէն ունէին կար ու կորով:
Աւխաւեցաւ. ո՛չ եւս էին նազընիք,
Ձիչ տասնոցներն ու խօլասո՛ւր ձեռածիրք.
Այն տիտններն ալ, ոյց լեզուաւ եր խնդրած
Քաջ փոսնոց, սէն փոսնոց, եւ միտ եր զայնս
քսացած,

Քանի մը զոյգ քի զարնելու փոխարէն.

Եղո՛ւկ, արդէն հին պատմութիւն՝ այդ ամեն:
Սակայն եանգօն որեւած եր շինել տուն.

Թեւ հանգիստ, կինն՝ իրիկունն եւ առտուն՝
Կը տանէր գլուխն, «Ա՛խ, տունընտր երեցաւ:»

Տան զաղափարն հրդեհին օրն իսկ ծընաւ
Նաւաւարին հաստատուեց մըսաց մեջ

Որք եւ այրի փարթամ տիկին մը՝ խորեջ
Մեծ փարսեան մ'ունէր. եանգօն դիմեց.

Սա հանեցաւ որ փարի պէտքն անդ հոգայ
Քաջ նաւաւարն՝ ոյր նաւն նրսած եր Տիկին:

Եւ իր ծընած հողոյն վրայ սիրագին
Եանգօն երկու խուցով կանգնեց իւր տնակ.

Թեպէս եւ փոքր, ալ եւ փոքր եր իւր քրտակ.

Նաւաւար մեր պարկեօ՛ս պարսֆէն կը սոսկար ,

Նա՛ որոյ դէմ մըրրիկն յանախ եր անկար :
Եւ օր մը կիցն լ'երկեակ որդիքն իւր սիրուն
Առաջնորդեց բերկրեալ նաւագն ի նոր տուն :
Ժըրագլուխ կիցն, ում համակրած եմ այնքան,
Պագաւ . . . ոչ ձեռքս եւ նակասս խոհական:
Եւ Նանգօն միշտ կ'օրհնէ զիւր մայր, որ իւր-
եան

Ընտեց կին մը քաղցր այնպիսի մեղուաջան.
Այլ ամենէն վեր երկնից Տէրն նա կ'օրհնէր,
Որ այնպիսի մայր մ'եր նրմա պարգեւեր,
Շընորհալի, քննեսագէտ, քաջարթուն,
Կամաց, սրբի տէր, — երկրաւոր զըւարթուն:

ՆԱԽԱՎԱՐՈՒՆ ՈՐԴՈՒՅՑ, ՎԵՐՋՆԱՔՆ
Ի՛ որպէ՛ս ինքն եր, այնպէ՛ս քաւ իւր ք-
ղաք.

Թոյլ չը տաւ որ ունենան ա՛յն փափաք
Բարձր ուսմանց, քսեպ մարդկան մահաբեր,
Ի շնորհս որոց է մարդ, բաբէ՛, տարուբեր .
Ի մեզ սուտն ու նեմարտն, անքսոյք
Թէ գո՛յ ըսկիզբ, վախճան. մի է կեանք քե
զոյգ:

Երկու քղաքն ալ արհեստի դրաւ վաղ.
Հօրն հանգոյն՝ չեն սրբեր օղի, կին եւ խաղ.
Իրենց դրամով կ'ապրին, կ'ընեն ե՛ւ խընայք.
«Ա՛հ, եթէ ինձ չափ լինէի՛ն եւ իմ տղայք
Բարեբաւսիկ յամուսնոյ: Այո՛ ես գիտ
Պարսիմ նախ մօրս, ապա կընոջս՝ իմ կեսիս:»

Ե. ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵՍԱՆ



Զ Ե Կ Ո Յ Յ

Մէկ երկու յողուածներովը միայն ծանօթ
Սեպուհ Ակունի, իր գործերուն առատութեան
պատճառաւ ասկէ վերջ ո՛ր եւ է առնչութիւն
չունի թերթիս հետ: Երանի թէ ուրիշ կարգ
մը ինքնակոչ յողուածագիրներն ալ մէկ մէկ
գործով զբաղելով՝ քաշուէին գրական հրա-
պարակէն: Մենք ատոր աղօթող ենք միայն:



ԵՌԱՆԿԻՒՆՆԵՐ

Շարաթ մը ամբողջ ռեկլամ, փայլուն
ներկայացում ու surprise ըլլալով effets de
lumière:

Իւսկիւտարէն, Սամաթիայէն, Գումգա-
բուէն՝ ռեկլամը իր որսերը բերած է:

Օրը Շարաթ է ու ժամը Զը: (Ը. Ե.)
Անիթիթատրոնը լոյսերու մէջ կը շողայ. դը-
րան առաջը luxe լամբան ամբողջ փողոցը
ու թատրոնին դուռը կը շողացնէ:

Երեք ամիսը անգամ մը գիշերը Բերա
կեցողներ կը կարծեն որ՝ իրենց համար է
այս խրախճանութիւնը:

Առաջին անգամ գիշեր ժամանակ Բերան
տեսնողներ, կերպը կը փնտռեն՝ ամեն գի-
շերուան գօնքաք ընելու:

Ուրիշներ, աւելի լրջախո՛հ, կը գովեն Թօ-
լան, որ հակառակ Բերա ընակելուն՝ ամէն
գիշեր դուրս չեներ:

Երթալով բաղմութիւնը կը շատնայ թատ-
րոնին դուռը ու ներսը: Ժամը իննին տե-
ղերնին գրաւած են Իւսկիւտարէն, Սամաթ-
իայէն, ու Գումգաբուէն եկող մեծապատիւ
հիւրերը Բերայի. անոնցմէ վերջը կ'սկսին
գալ, շաբաթը անգամ մը թատրոն եկող ըն-
տանիքները՝ լաւ տեղերը նստելու նպատա-
կով: Ինծի պէս habitués ները ժամը 9½ էն
առաջ ներս չեն մտներ, խնդիր չէ թէ տեղ
մնացած է թէ ոչ: High lifeը, թատրոնը ըս-
կըսելուն պէս իր մուտքը կը գործէ: Կարգ
մը Տիկիներ թատրոնին դուռը կ'սպասեն . . .
սկսելէ վերջը ներս մտնելու համար: Թօլան
առաջին վարագոյրին վերջերը կը հասնի,
երկրորդ վարագոյրին սկիզբը դուրս կ'ելլէ,
ու լմնաղուն կրկին հոն է:

Իւսկիւտարցին իր թատերասիրութիւնը կը
կը պարտի Մարլեանին. ու Բաբելեանին որոնք,
իրենց աշակերտներուն կը յանձնարարեն տ'ա-
նել՝ Բառմէնը, Փառաստը, Պօքասը!

Իւսկիւտարցին թատրոն կուգայ քնանա-
լու . . . Սամաթիացին կին դիտելու:

Իւսկիւտարէն մանտօլին սովորողներ կ'ել-
լեն chef d'orchestre՛ն կը քննադատեն . . .

Սամաթիա մեմօ երգողներ . . . պառլիթօնին
չեն հաւնիր:

Ու ամենքը մէկ կը խնդան, կը խնդան։
Մաս մը կայ որ հասկնալուն համար կը
խնդայ. ուրիշներ՝ բաւական վարպետ՝ խն-
դացողներուն նայելով կը խնդան. մէկ քանի
հատնալ՝ վերջին ծայր լրջութիւն կը ծախեն.
մաս մ'ալ խնդացողներէ մանեաթիղէ կ'ըլլան
ու կը խնդան և մեծ մասն ալ այս ապիկար
խնդացողներուն վրայ կը խնդան և իրաւա-
ցիօրէն.

Ու այս խնդացողներէն զատ կայ խումբ
մը երիտասարդներու, որոնք, խաղին ու
միւզիկալին ուշադրութիւն ընելու երեւոյթը
չունին. ու երբեմն երբեմն կը ժպտին...
քօռութներուն, ու թատրոնէն վերջ անհամ-
բեր դուռը կ'սպասեն անոնց՝ որոնք կուշա-
նան... և մեծ յուսախաբութիւն, ուրիշներու
հետ դուռս կ'ելլեն վեհերոտ ակրարկներ ձը-
գելով անոնց վրայ։

Գատըգիւղէն օբերայի չեն գար Բերա,
բայց եթէ Բեյքիւր խումբ մը գտնան՝ Գատը-
գիւղ կը հրաւիրեն.

Իւսկիւտար՝ Գատըգիւղէն շատ բան կը
հասկնայ օբերայէն, այդ է պատճառը որ ա-
մէն կիրակի Իւսկիւտարի շոգենաւը լեցուն է
թատրոն... գացողներով, որոնք թատրոնին
մէջ չեն կրնար գտնալ։

Մէյ մը շատ հասկցողները կուգան թատ-
րոն, մէյմը բնաւ չհասկցողները։

Անգամ մը բարեկապիս մէկուն հանդիպե-
ցայ, որ բաւական մեռալիւ է թատրոնի,
հարցուց.

— Երեկ գիշեր թատրոն գացի՞ր.

— Relâche էր պատասխանեցի.

— Աղւոր խաղաց, եղաւ իր հարցումը։

Ու Relâcheը քանի մը անգամ կրկնեցի և
մինչեւ որ հասկցուցի իրեն թէ Carmen ին
Խալերէնը relâche չէ՝, հոգիս բերանս եկաւ։

Մեր մեծ ունակութիւններէն մէկն է ա-
սիկա, որ հայերէն քերականութեան մէջ
շաղկապին ի՞նչ ըլլալը չտո՛վրած՝ կեղանք
Գաղիներէն կը խօսինք...:

Գ. Ռ. ՕՇ



ԱՆՊՏՈՒՂ ԾԱՌԸ

ԱՄՈՒԼ ԿԻՆԵՐՈՒ ՀԱՍՑԷԻՆ

Կիրակի է. Տէր եւ Տիկին Շուսիկեան
սալօնի սենեակն են. Տիկինը պատահանին
առաջը նստած՝ նորաձեւութեան ֆաթալօկ մը
կը քղրահէ։ Պարոն Շուսիկեան սիկաւը շըր-
քունքներուն՝ սենեակին մէջ կը պսկի։ Տէր
եւ Տիկին Շուսիկեան, մէկ ու կէս տարուան
ամուսնացած են. Տիկինը դեռ զաւակ մը չէ
կրցած պարգեւել իր գլխաւորին...:

Պրն. Շուսիկեան. — (Կը կենայ եւ պա-
տահանէն դուրս ակնարկ մը կը նետէ եւ դի-
մացի տունին փոքրիկ տալար կը տեսնէ) Էօֆ,
աս տէրս եղաւ ինծի... կատարեալ տէրս մը։

Տիկն. Շուսիկեան. — (Այֆերը ֆաթալօկէն
չզատելով) Ի՞նչ տէրս է ատ. ինծի ալ բաժին
կիշնայ կոր ատ տէրսէն...:

Պրն. Շուսիկեան. — Ծիծաղէ՛... ծիծա-
ղէ՛ վիճակիս վրայ, դեռ երես ալ ունիս ու
կը ծիծաղիս կոր հէ՛...:

Տիկն. Շուսիկեան. — Ճանրմ ի՞նչ կայ ը-
սէ... ըսածներէդ բան մը չեմ հասկնար կոր.
վիճակդ ինչ է որ...:

Պրն. Շուսիկեան. — Զաւակ մը, սա՛նկ
թօմպուլիկ մանչ մը չկրցիր պարգեւել ինծի.
ընտանեկան յարկ մը կազմեցինք որ ո՛չ համ
ունի, ոչ հոտ. նստեր անլի կերակուր մը
կուտենք կոր...։ Ուրիշներ կ'ամուսնանան
և հօ՛բ... նոյն իսկ ինը ամիս չբոլորած...
մանչեր, աղջիկներ աշխարհ կը բերեն...:

Տիկն. Շուսիկեան. — (Գաթալօկին ֆանի մը
եջերը դարձնելով) Ի՞նչ ընենք... բաղդը ա-
սանկ տնօրինած է եղեր...:

Պրն. Շուսիկեան. — Բաղդ մի՛... բաղդ
մի՛ պարապ խօ՛սք... տըռնց ամենքն ալ
բաղդ ունին... Նէվրիկ հանըմը լախը ունի՝
որ ամեն տարի ամուսինին մէկ մէկ հատ զա-
ւակ կը պարգեւէ, և խեղճ ամուսինը, ա-
մեն նոր զաւակ ծնելուն՝ գլխուն մագերը կը
փեթտէ և չորս կողմ կիշնայ կնքահայր փըն-
տռելու...:

Տիկն. Շուսիկեան. — Ըսել է քեզի ալ
ամեն տարի մէյմէկ զաւակ տալու է որ...
գոհ ըլլաս...:

Պրն. Շուսիկեան. — Չէ՛, չէ՛ չէ՛... մէ՛կ հատը կը բաւէ և կամ երկու հատ, մէ՛կ հատը մանչ, սանկ թօմպուլիկ մանչ մը և մէ՛կ հատ մըն ալ աղուորիկ աղջիկ մը. ա՛խ... այն օրը ինչ օր մը պիտի ըլլայ ինծի համար:

Տկն. Շուսիկեան. — Ատոնց ամենքը կ'ըլլայ...

Պրն. Շուսիկեան. — Կըլլա՛յ, կըլլա՛յ ե՛րբ սակայն...

Տկն. Շուսիկեան. — Քիչ մը ակուններդ տեղմէ... քիչ մը համբերէ... համբերէ ո՛ր... պապան քեզի բան բերէ...

Պրն. Շուսիկեան. — Հա՛ չօճուխ կը խաբես կոր հէ՛... ա՛խ ես գիտնայի ասանկ ըլլալը... ես գիտնայի...

Տկն. Շուսիկեան. — Գիտնայիր նէ ինչ պիտի ըլլար որ...

Պրն. Շուսիկեան. — Չէի ամուսնանար էֆէնտիմ, և եթէ ամուսնանայի նէ ալ՝ Նէվրիկին պէս կնկան մը հետ կ'ամուսնանայի...

Տկն. Շուսիկեան. — Այո՛, Նէվրիկին պէս կնկան մը հետ կ'ամուսնանայիր, որ քեզի ամեն տարի մէյմէկ հատ զաւակ կը պարգեւեր և դուռն ալ խեղճ մարդ, մազերդ պիտի փեթտէիր և կնքահայր փնտուելու պիտի ելլայիր...

Պրն. Շուսիկեան. — (Բարկացածի երեւոյթով) Ծիծաղէ՛... ծիծաղէ՛ վիճակիս վրայ... նայէ ինձմէ աւելի դժբաղդը կա՛յ... ամեն մարդ իրիկունը տուն գալերնուն պէս աղջիկին մանչերնին դէմերնին կը վազեն... էօֆ սէրս մը գլխուս ո՛ր սէրս չնմանիր. ասոր դարմանը արդեօք ով պիտի գտնէ... այո՛, ասոր դարմանը կը գտնեն ուրիշներ... ես անանկ կը կարծեմ որ ուրիշները զաւակ կը պարգեւէն...

Տկն. Շուսիկեան. — (Գաթալօկը գետին կը զարնէ) Արդէն ես գիտէի որ ատանկ էր, թէ ուրիշ տեղեր ալ կը յաճախես...

Պրն. Շուսիկեան. — (Ինքզինքը ժողվելով) Ե՛ս...

Տկն. Շուսիկեան. — Այո՛ դուռն և բերաներովդ ալ կը խոստովանիս ահա:

Պրն. Շուսիկեան. — Սակայն սխալ է, (պատահանքէն դուրս կը նայի եւ սպասուհիի մը գիրկէն մանկան մը իյնալը դիտելով). Ո՛ւֆ... ո՛ւֆ... ա՛խ... (աչիւրը կը գոցէ):

Տկն. Շուսիկեան. — Ի՞նչ եղաւ, ի՞նչ տեսար...

Պրն. Շուսիկեան. — Սպասուհիին գիրկէն Ն... էնց չօճօքը քարերո՛ւն վրայ ինկաւ... աչքերովս տեսայ...

Տիկ. Շուսիկեան — Տեսա՛ր... տեսա՛ր... աղէկ որ մենք չենք ունեցեր, ես՝ մերինը ըլլար նէ... ինչ պիտի ընէինք... նայէ սիրտս գէշ եղաւ մերինը չըլլալով հանդերձ... իրիկունը պիտի գայիր տեսնայիր տղուն՝ գլուխը պատռած... թեւը փրթած...

Պրն. Շուսիկեան. — Լռէ՛ տիկին...

Տկն. Շուսիկեան. — ... ոտքը ելած... և կամ քանի մը ամիսէն խեղճին կունակէն կուզ մը պիտի ելլա՛ր...

Պրն. Շուսիկեան. — Օ՛ֆ, լռէ՛... լռէ՛, աղէկ որ չենք ունեցեր...

Տկն. Շուսիկեան. — (Ինքզինքը) Այրած սրտի միտքարանք...:

Վ. ԳԵՐԸԳՅԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ստացանք Լիւոն Շաթրեանի պատկերազարդ Ընթերցարանին Ա. տարին, Յովհաննէս Էսկիեան գրատունէն՝ որ հրատարակիչն է: Գիրքը աշխատած, լաւ դասաւորուած գործ մը կրեւելայ, տպագրական յստակուկութիւնն ալ աւելի փայլ մը կուտայ գիրքին: Ուսումնական Պատ. Խորհուրդը վաւերացուցած ու գործածութիւնը ջերմապէս յանձնարարած է մեր բոլոր ազգային վարժարաններուն մէջ: Գին 4 զրուշ:

* * *

ՍԻՒՄՊԴԻԼԻՍԹԱՆԸ ՄՈՒՍԻՔԻ հեղինակ՝ Մէհմէտ Նազմ պէյ, հրատարակիչ՝ Օսմանը գիւթիւպիանէսիի տէր և վարիչ՝ Յովհաննէս Էֆ. Ազնաւոր: Սոյն գողտրիկ գիրքը, իր մաքուր և յստակ տպագրութեամբ կը բովանդակէ թուրք նշանաւոր բանաստեղծներու հատընտիր գրուածքները:

ՄԱՏՄԱԶԵԼԻՆ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ

Ինչպէս ամառ օրով տանիքի տակ չինըստուիր և ամէն ոք կուգէ բացօդեայ վայրերը վայելել, և եթէ կարելի ըլլայ՝ գիշերն ալ հող անցնել, ուստի մենք ալ այս ամիսէն սկսեալ մեր նիւթերը կընտրենք՝ տանիքէ դուրս: Եւ եթէ մեր ընթերցողները յաջորդաբար ներկայացուելիք գրութիւնները բաց գտնեն, յանձանքը մերը չէ, այլ տիրող տաքին, որ զմեզ կստիպէ բացուիլ առատ օդ չնչելու և համարձակ աշխատելու համար:

Ծիտակը ըսելով իրաւունք ունին կարգ մը մայրեր իրենց աղջկան բարձր ուսում աւանդել չուզելնուն համար: Սթաթիսթիքը մեզ կը համոզէ թէ, Իբսեն, Շօքենաուեր, Սքինսօզա, խանարիա, սէրլէ խուշի և ըսքէթաի վրայօք տեղեկութիւն ունեցողներէ աւելի, այսօր ամուսնական հրապարակին վրայ կը փնտռուին անանկ աղջիկներ, որոնք գիտնան իրենց ամուսնոյն պիտեւուն հետ խաղալով անոր եղբէնները ջուրը իջեցնելու եղանակը, բէշերնին սթթած աւել զարնելու, տախտակ չփելու դիւրին մէթօտը, թանէլի փիլալ կփելուն կերպը, և որ աւելին է՝ ունենան էրիկներնուն ունեցածը չունեցածը լէօպով մը իրենց վրայ դարցնելու է՛ն սրամիտ և համոզիչ լեզուն:

Եւ ուրախ ենք յայտարարելու թէ, այն օրէն երբ Մկրտիչ Մեղպուրեան չորս անգամ դարձուց իր տիպար վարժարանին կղզանքը ու դուռը գոցեց, ալ մեր աղջիկները սկսան ընտանեկան թեւերու տակ սալմա մեծնալ և պատրաստուիլ ամուսնութեան այն ձեւով զոր, իրենց ծնողք կը փափաքէին:

Ամէն օրէնք իր բացառութիւնը ունի: Մեր մէջ, իբր լաւ պիւֆթէկի մը մօտը գըրուած կառնին՝ բով սր քեռ ֆուիք, կան կարգ մը օրիորդներ, որոնք օտար վարժարան յաճախած ըլլալնուն բացառութիւն կը կազմեն վերը յիշուածներուն քով, և որոնցմէ շատեր, օտար վարժարան ալ գացած չըլլալով հանդերձ՝ լոկ քոօչէի մը օրինակը այդ կարգի օրիորդներէն սովորած ըլլալնուն հետեւա-

նօք, անոնք ալ վարակուած կըլլան այն համաճարակ ախտէն՝ որ համարձակութիւն կանուանի:

* * *

Երեւակայեցէք Էլպիս հանրմի մը և Յուկուր աղայի մը հասուկ աղջիկը, որ ա ժուռ գուլպա կը հագնի, մազերը à la sage femme կը շտկէ, ճամբան գաւազան կը գործածէ, բաց թեւ պլուզ կը հագնի, և Եւրոպական լեզու կը խօսի, նոյն իսկ ... Համաշրջի Մարիամին հետ:

Այսպէս էր Էպրուկ, կամ Էպրուհի, որը որ խոշերնիդ կուգայ, և տեսէք թէ նոյն այդ աղջիկը ինչ փորձանք մը եղած է հօրը գլխուն, որուն վրայի մազերը թափած են ալ սիրտ հառնումէն, ամօթէն և չարչարանքէն:

Օրը կիրակի է, Գընալըի տէպառքատէռը ահագին բազմութիւն մը կեցած, գինովի գլխարկի մը պէս մէկ քով ծռած առաջին չոզենաւէն ելողները կը դիտեն:

Բազմութիւնը զիրար հրելով տակաւ կը տարածուի կղզիին (չորս կողմը պիտի ըսէի քիչ մնաց), մէջ: Բոլորն ալ endimanché, ճերմակ պլուզ, ճերմակ քօսթիւմ, խաբր գլխարկ, վուալէք, ռէյքէ բոնթալօն, ճերմակ ժիլէ, ալ պէնի քուսվաթ, սիւռե պօթիւր, մին քսակով միւսը կուրծքով հարուստ գոյգեր, (եղբայր, քոյր, այր և կին ... չեմ գիտեր, այդ էն կարեւոր մասը ինձ համար մութ է), և այս բոլորին մէջ աղա տուտու մը բառին յիշման յիշման իմաստովը և ... և ... և ... դպրոցական հանդէսին վկայականը ձեռքի պէս ճերմակ թիւլերու մէջ օրիորդ մը, չաքքինաքի քալուած քով և նայուած քով մը, որ կարծես ըսել ուզէր «աս պայազդի տեղը կը վալլեմ աճապ ... »:

Ձգենք որ չոզենաւէն ելողները բոլորն ալ ցրուին հոս հոն, ու մենք շարունակենք մեր նիւթը, հետեւելով այդ օրիորդին և իրեն ծնողքին, որոնք կերթան նստիլ Գայմաքեան Պետրոսիկ աղայի քաղինօն:

լով նայելով է քի աս օր մեր աղջիկն ալ պաշխասններուն երեսը կը նայի կոր, անիկայ գիշերօթիք դրինք, տունին մէջը մինակ մը նայինք նէ, պիր տիւղ երեսդ նայեցայ, հիմա ալթըն աչքերս պիրի դառցունեմ, գէրէ անդին ... ճիրիթ կը խաղան կոր, շաշխըն, լէօպէթով նայինք նէ քէշ չըլլար, գէրէ վեց օխտը հատ եղան ...

— Արեւը սիրեմ, վրան հով մը ունի քի...

— Մինչեւ հիմա հով ըսածդ գիտէինք քի տաղըթմիշ կընէր, աս ինչ քէօթօղլու հով է քի թուլթխալի պէս գլոխը կը ժողվէ կոր...

Անդին խօսակցութիւնը կը շարունակուի տաքօրէն:

— Ա՛... միւսիւ Արամ, օրիորդին կարծիքը լաւագոյնն է, մարդս սիրոյ մէջ թըռչունի պէս ըլլալու է, ազատ, ուզած ճիւղը ընտրելու համար ...

— Այո՛, ճիշդ այդ կառծիքը ունեցողնեռ շատ չեմ տեսնեռ, սակայն պէտք է ոռ ը՛... ը՛... ը՛... ամէն աղջիկ ինձ պէս մը տածէ և գոռծէ ...

— Պռավօ՛, օրիորդ, դո՛ւք հրաշալիք մ'էք, դո՛ւք պատիւն էք մեր սեռին, դո՛ւք, դո՛ւք, այո դո՛ւք մին էք այն հազուադիւտ և չքնաղ...

— Կընիկ, մերինը առաւ քալեց, տահա տողոռուսուն կուզես նէ, խօլթուխներէն պըռններ կը տանին կոր, հազըր հոս ժամ ալ կայ, տէրտէր ալ, ետքը՝ երեք եկանք չորս կը դառնանք, եկուր սուիկայ ասդին առնենք, գէրէ ասոնք գիտնականութենէն սաքմիշ եղան տէ մէղաթը հանեցին աղջիկդ...

— Սուս աման, մեղքը մի մոնար մարդ, խուռնային տակը նստածի պէս քրտինք կը թափեմ կոր, վրաս կէշութին կուգայ կոր բռնած եօլէդ ...

— Վաղը մէկալնօր քրտինքի տեղ արցունք պիրի թափես կընիկ, խելքդ տուն բեր, ալթը օխա ըրեր կը տանին կոր էպրուկը ... ինչ կար քի աս օր առիր հոս եկար, ատային մէղէն հատնիք էր քի խածիր հասցուցիր...

— Աղջիկս ինքզինքը գիտէ, ան անանկ չէ քի օխտը հատը, տահա տասնըօխտը հատ տէլիխան ըլլայ նէ, դէմ կը դնէ...

— Կէօմրիւկի համալ չեն բնտոէր կոր կը-

նիկ, էհլի նամուս աղջիկ կուզեն կոր հիմա բիացան, աս ասանկ երթայ նէ վաղը խաղէթային մէջն ենք ... Կ'ըսէ Յակոբ աղա, խիպեն և բարկութենէն կարմրած քրտնած:

Օրիորդ էպրուկ, որ գիտեր իր ծնողքին բնութիւնը, կուզէ հանդարտեցնել զանոնք, ներկայացնելով իր բարեկամները մի առ մի, ուստի աթոռը ասդին դարձնելով՝ խօսք կառնէ,

— Միւսիւ Լէոն Սօլ ֆասօլ, իմ նախկին բառեկամներէս ... մայրս, հայրս...

— Օ՛... մէռսի ... պատիւ է...

— Միւսիւ Առամ Սինէք ... բառեկամիս բառեկամներէս...

— Միւսիւ Էտմօն Խավեառճի ... բառեկամիս սուտակիցը...

— Մէռսի աղջիկս ամա՞, ասոնք հիշ տեսած չէի տէ...

— Այո, հայր իմ, ընդհանուրապէս մինակ պտոյտի գացած ատենս ինձ կընկեռանային, անոռ համառ չէիք տեսած, ասկէ վեռջը շատ կը տեսնաք...

— Միւսիւ Արէլ Ծիյէռճեան, նոյնպէս վաղածանօթ բառեկամներէս...

— Միւսիւ Ալֆօնսօ Ծամճի, դպրոցէն ծանօթ բառեկամս...

— Ինծի նայէ աղջիկս, ասոնց ուստա պաշին ուր է ... ան ալ մէյմը բռէղանթէ ընէիր ... Կ'ըսէ Յակոբ աղա, լէգէոն մը երիտասարդներու ամուր ամուր ձեռք թոթուելներէն և կոտորտոող ռէվէռանսներէն շուարած:

— Չեմ հասկնառ հայր, ինչ ըսել է սուս տա պաշի...

— Սանքի ասոնք բիւթիւն էսնաֆ են եղեր, որը խավեարճի, որը ճիյէրճի, որը ճամճի, հէլէ սա սինէք ըսածդ հիշ իմացած չէի...

— Հայր, պէտք է գիտնաս ոռ...

— Ամօթ է աղջիկս տիւղ խօրաթէ ... մէյ մը հաղա, էօնէօ ըրէ քի, խըռթլախդ բացուի տէ ծուռ ու մուռ չի խօրաթէս...

— Այո՛, այսինքն այս միւսիւնեռուն մահ կանոնները ալաֆուանկայի մէջ կը կոճատեն, և մինակ առջի վանկեռը կը գուռցեն...

— Վանկէլ ալ կայ աղջիկս, ատ չի տեսայ...

— Ո՛հ ... վանկեռը, վանկեռը...

— Հա՛ ... պանքեռը ... էյ նայէ աստար էսնափին մէջը պանքեռ ալ գտնուելու է քի ախտութեան դառնայ, քոէտիթօ ըլլայ...

— Աման ճանրմ Յակոբ աղա, ձգէ քի, էպրուկս մի ըստ միոյն հասկցունէ ... կ'ըսէ տիկին էլպիս, «աղջիկս կիրկիր է» ի ձեռով մը կէռտան չինելով:

— Հէլէ սէն սուս գառը, բիւթիւն քուկին բռնած ճամբայովդ էր քի աղջիկս սաբըթմիշ ըրաւ, չօգ չէյ, իմ գիտնալս աղջիկ ըսածդ իր ճընսէն ընկերներ կուսննայ, աս մերինը մանչ ծընելուն ասղ աղջիկ է ծըներ, եաղըշութենով, աղէկ մը մուայէնէ ըրբ'ը քա էլպիս ... չելլայ մանչ ըլլայ...

— Ապուիս սապուիս թող մի տար կէնէ, հիմաճուկուան թամ զանցային կէօրէ աղջիկ է, էրիկմարդու մօտ, անանկ տըլլայ չէ եավրուս, արեւուն կշտանամ տէ կէնէ անօթենամ ... ընհ ... եավրում ... պօյըդ սիրեմ...

Այս խօսքերը մէկուսի կանցնին, մինչ միւսիւնները իրարու նիսպէթ պիւռաներ կապըսպրեն և յաջորդաբար կը հրամցեն օրիորդին, և երբեմն ալ Յակոբ աղային և տիկնոջը՝ էլպիսին:

— Կընիկ, աս էսնափ քիւմէսին նիյէթին չեմ հաւնիր կոր, հապըռէ իչկի կուտան կոր քիթիս ... ամա շաշիւքնները չիտեն կոր քի, ինտոր քի, չէլիկը քանի խուլլանմիշ ըլլաս անխըտար փառլամիշ կըլլայ, անանկ ալ ես, քանի խմելու ըլլամ նէ աշկս կը պացուի...

— Ա՛խ, ինչ աղէկ կըլլար սա միւսին ճամճի ըսաւ նէ, ան առներ էպրուկս...

— Ան սախաթ գէնահաթ է, խախմայի մը գալուն կիպի, սէրմայէն ցրելս ցրելս կըլլայ...

— Հապա սա խավեարճին ... պօյը սիրեմ, սիւլիւն է գիտես քի...

— Ան հիմա սիւլիւն է ամա, ետքը ետքը սիւլիւն կը դառնայ տէ իր սէրմայէն ուտելէն սօղրա, իմինս ալ ծծել կը պաշլայէ...

— Քա ի՞նչ գիտնամ, ամէն ալ իրարմէ չիրին, իրարմէ կուստօլու, ճիյէրճին ալ գէշ տղայ չերեւար կոր...

— Հա ամա ան ալ սախաթ է, սօխախէն անցած ատենը ինչտար փիսիկ կայ նէ բէնճիրէն կը թափին ... , սա սինէկը ըսես նէ, նայէ ըսելիք չունիմ, զաթը անունին պէս մանարուք է, բէք զօռի դայ նէ, թռնախիս առան կը ճգմիմ կըլլայ, կերթայ...

Մինչ աղա տուտու այսպէս կերուէին քով քովի, յանկարծ օրիորդը իրենց մօտենալով,

— Հա՛յո ...

— Աման աղջիկ, գիտեմ քի ետպանճի ես, սա լեզուդ չի շտկեցիր գնաց ... կ'ըսէ Յակոբ աղա, խմած պիւռայէն մասամբ թուլցած...

— Հա՛, հա՛, հա՛, պիտի խնդռէի ոռ, հռաման տայիք, էշէռով քալալքատ մը ընել բառեկամենուռու հետ վեռեռը...

— Համմէ՞ ... կ'ըսէ էլպիս, ձեռքը աւանջին տանելով, որպէս զի լաւ լսէ...

— Չի հասկցա՞ր քա, հրաման տուր տէ էշերով խալալ չալէնք կ'ըսէ կոր ... աղջիկս, դուք չօպան էք, տէր ողորմեա՛յ ... չի վայեր, աղջիկս էկէր տիւտիկի մէռաքը ես նէ, ես վաղը չըխըրխճիներէն մէկ հատ մը կառնեմ...

— Չէ՛ հայո, քալալքատ ըսելը, էշու վռայ նստինք ըսել է...

— Անոր ատանկ չեն ըսեր աղջիկս, մեր հասկցած լեզուովը, էշէկլէնմիշ ըլլանք կըսեն, էյ հեռունները երթալու համար հրաման առնելու ի՞նչ տեղը կա՛յ, հոս որ սահաթ է ատ բանը չն'ը ըլլար կոր...

— Կաղաչեմ մայո, ըսէ ոռ ձգէ, մինք միւսինեռուն հետ քիչ մը պիտի բացուինք...

— Պաղ կառնես եավրուս, գէրէ ինձի կուգայ քի, հոս քի ասանկ քէշիշլամէ կը փըշէ կոր նէ, հեռունները երթալնուդ կիպի խառանելի պիտի դառցունէ...

Նոյն պահուն միւսինները բոլորը մէկ գըլուխին տաքցած Յակոբ աղան կը շրջապատեն,

— Ը՛ ... շատ պիտի աղաչէինք որ, թոյլ տայիք մեզ և ձեր օրիորդին, որպէս զի պահ մը ըմբոշիննք կղզւոյն սքանչելիքները...

— Հիմա կուգայ կառնեմ ճանրմ աղան չեւը չարժեր...

— Քա ի՞նչ կուգեն կոր, կըսէ էլպիս

երկու ձեռքովը բեշերուն առջևի մարերը վեր քաշելով ...

— Հիշ ճանրմ պօշ բան ... էլէնճէլիք կուզեն կոր եղեր ...

— Բա առ Յակոբ աղա, դուն ալ քու թառափէթ իբրամ մը ըրած կըլլաս ...

— Կարծեմ մաքուր հայերէն չէք հասկընար ... կըսէ միւսիւ ճամճեան, բթամաւոր ժիլէին անցնելով և ոտքին մէկը շարժելով ...

— Հէմ ալ բաղնիքէն ծրք ծրք կլած թէ միդ հայեվարը կը հասկընամ ամա, որ սահաթ է ձեր խօրաթած հայերէնը անկաճիս խոռթ կուզայ կոր եավրում, դուք պտըտել կուզէք նէ հրամմեցէք, էպրուկը հոս թող մնայ, ետքէն նորէն եկէք տեսնուեցէք ...

— Ա՛ ...

— Ա՛ ... ա՛ ...

— Ա՛ ... ինչպէս ...

— Օ՛ ... ո՛չ, ո՛չ, ո՛չ ...

— Բա՛յց ... կարելի բան չէ ...

— Հաւատացէք որ... non! non! non!

Բացաքանչեւ թիւնները օդը կը դնդացընեն, և ի վերջոյ տեսնելով որ անկարելի է որ յաջողին իրենց առաջարկին մէջ, ակամայ կը բաժնուին այն ատեն՝ երբ օթէլին զանգակը ի ճաշ կը հրաւիրեր զիրենք:

* * *

Ինչպէս անցաւ օրուան մնացեալ մասը չեմ գիտեր, բայց երբ երեկոյին վերջին շոգենաւով կը դառնային, երկու կիներ որոնք Յակոբ աղայէնց կոնակը նստած էին՝ սապէս կը խօսէին իրարու հետ.

— Էտէպօիզը չէ՞ սա կոնակինս, սիւրիւ մը տէլիփանկըները կըլսը ժողվեր տէ՛ մար հար օլաճախներն ալ առմուտի պէս սէյրճի էին եղեր նէ ...

— Հա քա՛, վայ ան կնկանը քի ատ վոթկածին կեսուր պիտի ըլլայ ...

Յակոբ աղա, որ բառ առ բառ լսեց այս վճիռը, կնկանը ականջն ի վար.

— Ասկէ ետքը չըլլար, ատ գիտեմ, էկէր օպիր կէլիշտէ կէնէ իրար կանք տէ կարգուելու ըլլանք նէ, նայէ քի աղլիկ զաւակ չի պերես, պերես նէ ալ, խօլթուխիդ տիպը առ նստէ, ուսմունք սովորի ըսելով՝ տպրաւ տունէ տպրատուն մի խրկէր, զէրէ աս պիւ չիմները մարդը մէզառը, նամուսն ալ հետը կը տանին կոր ...:

ԼԻԼԱ

ՇՆՈՐՀԱՌՈՐԱԿԱՆ

Պաշտօնակցի անկեղծ զգացումներով սոգորուած՝ կը փութաւ ջերմայէս շրնորհաւորելու եւ խնդակցութիւնն իս յայտնելու մեր անգուգական Օրաքերիկն ԱՐԵՒԵԼԻՔի արդի արժանաւեր Ազն. Գարեգին ԵՅ. Պօյաճեանի, որ սուղ ժամանակի մէջ ցոյց տուած հաւասարիւն եւ ուղղամիտ գործունէութեամբ յրազրակիւն աշխատիքի մէջ ամենապայտուն դիմի մը գրաւելով՝ յաջողեցաւ արժանաւանայ ևնոյն Հայաքերիկն Արժանաւերութեան, վաւերացած ՇՈՐԻՆ ԿԱՏՍԵՐԱԿԱՆ ԲԱՐՅՐ ԻՐԱՏԷՈՎ:

* * *

ՇՆՈՐՀԱԿԱՆԻՔ

Տնօրենութիւնս իր անկեղծ շնորհակալութիւնները կը փութայ հրապարակաւ յայտնելու ԱՐԵՒԵԼԻՔ օրագրիկն Պաշ. Տնօրենութեան եւ Խմբագրութեան, որ կը հաճի ամէն շաբթու իր սուղ եւ կարեւոր սխանակներուն մէջ հիւրնկալելու «Համրագիտակ» ի լոյսնդարակութիւնը մանրամասնաբար:

Այս կէտը անգամ մ'ալ ի յայտ կը բերէ սալ բացարձակ ճշմարտութիւնը թէ՛ ԱՐԵՒԵԼԻՔ միշտ փափաքող է մանաւանդ զարգացման եւ սոսկ ալ ոչինչ կը խնայէ իրեն պաշտօնակցի:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԹՈՒԼԵՐԱՆՈՒԹԻՒՆ

ՅԱԶՈՐԻ ԹԻՒՈՎ

Ե. Տէմիրճիպաշեանի մէկ խիստ սրամիտ ու զուարթ ֆոգրոյին՝ ԱԻԵԼԻՆ ՃԱՌԸ.

Մ. ՄՆԱԿԵԱՆ (ղերասանապետ)

ԹԵՈԴԻԿ

Յ. ԱԼՓԻԱՐ

ԷՏՄՕՆ ՍԷՖԻՐ

ՆԵՐՇԱՊՈՒՀ

ՌՈՄԱՆՈՍ

Ե Լ

Լ Ի Լ Ա Է

Խիստ զուարճալի յօդուած մը Գուճ-գաբուի, Սամաթեայի և Մաքրի-գիւղի շոգենաւներուն ներքին պատկերներէն: Ինչպէս նաեւ շոգենաւին մեծագիւր մէկ պատկերը:

ԻՆՉՈՒ ԿԸ ԶԱՐՄԱՆԱՔ

Երբ կը տեսնէք երէկուան իւլեզը՝ որուն շատ մը խրատներ կուտայիք մարդ ըլլալու համար, և որ այսօր իբր թէ մարդ եղած և ձեր մարդ մը եղած ըլլալուն վրայ տարակուսելով՝ կսկսի զձեզ մարդ ընելու համար խրատել, չէ մի որ անցուկը մոռցուկ է:

×

Երբ կը տեսնէք թէ անհնարին ջանքեր ու սաստկասաստիկ ճիգեր կը թափէ Տեար Դարբինեան, իր դարբնած հոսանքներ իբր մէկ հատիկ՝ վաւերացնել տալու համար կրօն. ժողովին, որով հասած պիտի համարէ ինքզինքը իր փառաց գագաթնակէտը, չէ մի որ երեսը աստառ ալ կուզէ, հետեւաբար պէտք է մաղթենք իրեն յաջողութիւն, կարողութիւն, զօրութիւն և փառք յաւիտեանս ամէն:

×

Երբ կը տեսնէք լրագրի ցրուիչներ, լուսարարներ, խուլումբներ, չալղընիներ ևւն., որոնք այս միջոցիս մէկ մէկ առթիւս կտրած են, չէք գիտեր թէ տակաւին ինչ ճաշակներ ու տաղանդներ կան թաղուն, որոնք դուրս կը պոռթկան ամառուան այս տաքուն:

×

Երբ կը տեսնէք սէր մը որ մերժուած է, չէ մի որ արդէն մեծ մասամբ ամուսնութիւններուն տարի մը վերջ պատահածը նոյն բանն է, եթէ ինձ չէք հաւատար՝ Դատաստանական Խորհուրդին հարցուցէք:

×

Երբ կը տեսնէք թէ մեղրալուսնի անուշութիւնները մեղրալուսնէն վերջ ապուշութիւններ միայն եղած կըլլան, չէ մի որ քաջախիղճ գինիէ կըլլայ:

×

Երբ կը տեսնէք թէ ամէնէն լուրջ կինն իսկ, քծնանքի ու գովասանքի առջեւ քուրջ կը դառնայ, չէ մի որ անուշ լեզուն օձը ծակէն կը հանէ:

×

Երբ կը տեսնէք թէ թաղականներէն շատեր, որոնք միայն թաղական եղած ըլլալու համար թաղական եղած են, չէ մի որ էսկիճի կիրակոսն ալ թաղական ըլլալ կը փափաքի:

×

Երբ կը տեսնէք թէ մեծ մասամբ մեր դպրոցներուն մէջ տղաքը կանոնաւոր հասարակ ընթերցանութիւն չեն սովորիր, մանաւանդ գրաբար ընթերցանութիւնը, որ ճարտերէնի չափ ճիշտ ունի, չէ մի որ մեր տղաքը կարգաւ սովորելու համար չէ որ դըպրոց կերթան՝ այլ միայն շատ մը... ութիւններ:

×

Երբ կը տեսնէք վարժուհի մը որ վարժապետի մը հետ խօսած ատեն միշտ աղւորակըսէ, չէ մի որ արդէն ամէն օր մինչեւ իրիկուն բերանը վարժուած է ըսել իր պըզտիկներուն:

×

Երբ կը տեսնէք թէ վարժապետ մը կամուսնանայ վարժուհիի մը հետ, չէ մի որ ամէնէն յարմար ամուսնութիւնն ալ այն կըլլայ, երբ արդէն կանխաւ իրարու խույ առած կըլլան:

×

Երբ կը տեսնէք թէ շատ անգամ շատ մարդ իր խօսքէն կը դառնայ, չէ մի որ արդէն աշխարհք ալ արեւուն շուրջը կը դառնայ:

×

Երբ կը տեսնէք թէ սիրելի բարեկամս Էս-Սէ իր համեղ ու զուարթ ֆանթազիները պահ մը դադարեցուցած է, չենք գիտեր թէ այս միջոցիս սգաւոր է, ինչպէս ծանոյց Հանրագիտակ:

×

Երբ կը տեսնէք թէ գործս ձգեր ու ելեր պօշպօղազութիւն կընեմ, չէ մի որ այդ ալ ճիլիք մ'է:

ՌՈՄԱՆՈՍ



ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԳՈՒՄ-ԳԱՌՈՒ. — Տեղւոյս նախորդ թաղականներէն մին, տեսնելով որ այս անգամ բազմաթիւ չի ժպտիր կրկին ընտրուելու համար, որոշեց Արնավուտ-գիւղ փոխադրուիլ: (Ախրնի՜ր պուռնուին քէնարէն շատ մանցնիր, կըլլայ որ թաղականութենէ մերժուիլդ միտքդ կ'իյնայ և մարմինդ ալ ծովը ... Ծ. Խ.):

ՆՈՅՆ. — Շարժում մէջ բաժնուած 1400 թաղականական քուէներէն 630ը միայն սընտուկը մտած է, ուստի կուզենք գիտնալ թէ մնացեալ մեծագոյն մասը որ ծակը մտան: (Գտնողին բաթլիճան տօլմասի մը մեր կողմէն նուէր. Ծ. Խ.):

ՆՈՅՆ. — Տեղւոյս fool-ball (•) լիւր-լիւր Բերայէն ու Գառը-գիւղէն լաւ խաղացող անդամներ միասին առնելով՝ գնաց մրցիլ Սկիւտարի փիւղին հետ, և չէ՞ք զարմանար ... 2 կոլ ըրաւ, աֆէրիմ պէպէքներս, տարի մըն ալ ոտքերնիդ ջուրը դրէք կարելի է յաջողիք:

ԱՏԱ-ԲԱԶԱՐ. —

Մկրտիչ Վարդան, երբեմն սարկաւազ Ամուսնանալու խորհուրդով մ'աւագ Ուզեց հոս ուտել սիրոյ մի գէր հաւ, Բայց հաւին տեղը ... վեց գիրը կերաւ! Այսպէս առնելու հիմէնեան համէն, Ապարդիւն եղան ջանքերն իր ամէն, Ու վիճակեցաւ տեղ կնոջ գրկին՝ Անկողին մ'իրեն ցուրտ ու լայն կրկին ...:

ՍԱԼՄԱԹՕՄՐՈՒՔ. — Վարժարանիս հարցաքննութեանց առթիւ Ուսումն. Խորհուրդէն կարգուած քննիչին երեսը անգամ չի տեսնաւ, քարի՜ք ըրածնուն նայելով՝ միջահասակ գիրուկ ու սակաւամօրու անձնաւորութիւն մ'է եղեր:

ԹՕՓ-ԳԱՌՈՒ. — Անցեալ կիրակի տեղւոյս եկեղեցւոյն մէջ եռաձայն պատարագ երգուեցաւ ի ներկայութեան ցանցառախուռն բազմութեան մը, երգեցողութիւնները կամ մանաւանդ մենեքը այն աստիճան փափուկ

սեռին ջիւերը ցնցեցին որ, շատերուն վրայ մարելիք եկաւ:

ՍԿԻՒՏԱՐ. — Իճատիէ, Պէյլէրին պարտէղին բաթուօնը՝ Միհրան էֆ. կը խնդրէ ծանուցանել թերթիդ միջոցաւ քալիլու պուսալասի յաճախորդներուն, որպէս զի քիչ մը կամաց խաղան, թէ ժամը տասնին վերջ տան խաղին, հիանալի կռամօֆօնը չի խանգարելու համար:

ՍՐԱՄԻՏ ՄՐՅՈՒՄ

Հետեւեալներուն ո՛վ որ մինչեւ 15 օր կարենայ սրամիս, զուարթ և պաշտաւ պատասխաններ գտնել և մեզ հասցնել այս կտորոնով, ամբողջ կիրակի մը իր տրամադրութեան տակ պիտի ունենայ մեր Տնօրէնին անձնական կառքը պտոյտի համար: Իսկ գաւառացի բաժանորդներուն պիտի զրկուի սիրուն չըրջանակ մը պատկեր դնելու յատուկ:

- Ոսկերիչի մը պէս՝ . . .
- Բանաստեղծի մը պէս՝ . . .
- Սամաթիացիի մը պէս՝ . . .
- Բերացի օրիորդի մը պէս՝ . . .
- Կեոարացիի մը պէս՝ . . .
- Քահանայի մը պէս՝ . . .
- Օրուան միւսիւի մը պէս՝ . . .
- Յնոց աղջկան մը պէս՝ . . .
- Հանրագիտակի կարգ մը բաժանորդներուն պէս՝ . . .
- Ինծի պէս՝ . . .

Արսօնսկր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Պապը-Ալի Գաւառի քիւ 52.

«ՀԱՆՐԱԳԻՏԱԿ»-Ի ԹԵՐԹՈՆԸ — 4 —

ՎԱԳՐԻ ՄԸ ՀԵՏ ԱՌԱՆՁԻՆ

ՈՐՍՈՐԴԱՎԷՊ



... Գազանին պոչը պարտնի մը պէս քաշելու.

յանդուգն մտածումներէն, փրկութեան անակընկալ միջոցներէն, որոնք իրենին պէս գործունեայ իմացականութենէ մը միայն կրնային ծնիլ:

Գտած միջոցը, կ'ուզեմ, և պարտիմ նոյն իսկ յանձնարարել ամէն անոնց՝ որոնք իրենց ճամբորդութիւններուն մէջ, քաբիթէն բարեկամիս և իմինիս պէս տագնապալի զիրքի մը մէջ կը գտնուին: Աստուած չի ցուցունէ՝ ...:

Փորձը եղած է, ուստի այդ մասին կասկածները թերահաւատութիւն կ'ենթադրէ:

Փրկութեան և ազատագրութեան բանաձևը ահա կուտամ ձեզի: Ո եւ է անապատի մը մէջ հալածուած էք վագրէ մը, և կրցած էք, ճարտարութեամբ կամ զօրութեամբ բանտարկել վայրի կենդանին յատակը չելած տակառի մը մէջ, միջոցը գտած էք վերոյիշեալ գազանին պոչը պարտնի մը պէս քաշելու, և անոր կառչելով կրցած էք տակառը պահել ձեր հակառակորդին և ձեր մէջ:

Ընդունինք, պարոններ, որ այս աստիճան յաջողեցանք, ինչպէս որ քաբիթէն բարեկամս ու ես եղանք:

Շարունակենք բանաձևը:

Երբ տեսնէք որ կատաղի կենդանին ձերինէն աւելի մեծ զօրութեամբ մը օժտուած է, և փոխանակ ձեզմէ տարուելու, ինք ձեզի կը քաշէ կը տանի, և հետեւաբար չէք գիտեր թէ ո՛ւր պիտի կենաք, որովհետեւ անոր ո՛ւր կենալը չէք գիտեր, առէք այն ատեն կատաղի կոչուած կենդանին պոչը, իբրեւ թէ պարան մը ունենայիք ձեռքերնիդ ու նոյն իսկ առաստան մը կամ պարզ դերձան մը, և դարձուցած պոչը իր վրայ և կղթկոսպ (քէօռ կապ) մը ըրէք, ուժով կապ մը՝ նաւաստիի դրութեամբ, բայց այնպէս մը որ կապը չի սահի չի քակուի և ոչ ալ տակառին ձեզքէն անցնի երբոր զայն արձակելու ըլլաք: Կենդանին այն ատեն իր թագստոցը կռնակն առած՝ ի փախուստ կ'աճապարէ խելայեղ:

Այս յանդուգն փորձն էր, պարոններ, այս հրաշալի կերպն էր, զոր կիրարկեց Մաք-Քլէյնըն մեծ յաջողութեամբ:

Հաղիւ թէ վագրին պոչովը հանգոյցը կազմուեցաւ, իսկոյն բարեկամս ինծի ստիպեց որ կարելի եղածին չափ սուր աղաղակներ բարձրացունեմ, և ահա, ամէնէն աններդաշնակ, ամէնէն կատաղի և անլուր պօռուքները թռան թէ՛ բարեկամիս և թէ՛ իմ կոկորդէս:

Երաժշտական ու է գործիքի չգոյութենէն, սկսայ զիպուածաւ գրպանս գտնուած հին ուսի երկու շիշերը ուժով մը իրարու զարնել, և ասով կրցանք վագրին ներշնչել այն ահ ու սարսափը՝ որով արդէն մենք երկար ատեն համակուած՝ քիչ էր մնացեր որ մահուան դուռը հասնէինք:

Մեր պոռչտուքը կրկնապատկեց զաղանին փախուստի արագութիւնը, և իսկոյն միւր-ճեցաւ մացառախիտ թաւուտքին մէջ, և աչքէ կորսնցուցինք:

Անտարակոյս, այս յանդուգն եղանակը քարթթէն բարեկամիս կեանքին ճողոզութիւն-ներուն ամէնէն փայլուն ու գեղեցիկ մէկ դրուագը կազմեց, և, հակառակ իր համեստու-թեանը, չէր կրնար բռնել ինքզինքը յիշելու ատեն իր ճամբորդութիւններէն այս միջա-դէպը:

Վագրին պոչովը շինուած կլթկապը (քէօն կապ), քիչ սովորական եղող իմացակա-նութեան մը և արիութեան մը ապացոյցն է: «Սոսկալի, ահուելի վայրկեան մը կար անցու-նելիք, կ'ըսէր բարեկամս անկէց վերջը, շատ անդամներ, ան ալ պոչը թողած վայրկեան-նիս էր: Ո՛վ կրնար մեզ ապահովել թէ կապը չը պիտի քակուէր. հոն էր մեր գոյութեան հանելուկը»: Եւ կ'աւելցունէր «Փիղերուն պոչին ձարերը քաշել, ձեռքով կոկորդիլոսներ բռնել, գետածիներու յաղթահարել, բոլոր ասոնք աղայական խաղեր են մեր վագրի հան-գոյցին հետ բաղդատմամբ»:

* * *

Ինչ մեծ ուրախութեամբ, շարունակեց պատմիչը, մենք գտանք մեր նաւաստիները ծովեզրին վրայ: Անոնք ալ քիչ մնացեր էր որ պիտի մեկնէին գէպի շոգենաւ, ծովուն բա-ցերը: Գիշերը կը մօտենար, և զմեզ գտնելու համար իրենց ըրած բոլոր ջանքերը ապար-դիւն մնացած էին: Աւագին վրայ՝ վագրի մը անցքին հետքերը, և մեր ալ ճաշին մնա-ցորդները ցրուած տեսնելով, հետեւցուցեր էին որ այդ վայրի անասունին գոհը եղած էինք անկասկած:

Երբոր շոգենաւ գացինք, մեր գլխուն եկածները պատմեցինք նաւապետին և իր մար-դոցը: Վագրին ստեւները, որոնցմով մեր ձեռքերը տակաւին ծածկուած էին, վաւերակա-նութեան հրապոյրը կը շեշտէին մեր պատմութեան:

Քուրթիթէն Մաք-Քլէյնըն ամէն ճամբորդի շնորհաւորութիւններուն առարկան դարձաւ:

Գալով ինծի, ես չէնք շնորհք հիւանդ ինկայ, կը վառանցէի, զիս հանդարտեցնելու համար ստիպուեցան խոշոր չուանի մը ծայրը անկողինիս ոտքին կապել, և միւս ծայրն ալ ձեռքս տալ, զոր ժամերով կը քաշէի, իբրեւ թէ Մաք-Քլէյնընի մահասարսուռ գործողու-թիւնը շարունակէի . . . :

Երբ քիչ շատ ապաքինիլ սկսայ, բժիշկը պատուիրեց որ պզտիկ առասաններ դնեն ձեռքիս մէջ, որոնց ծայրերուն հանգոյցներ շինելով տեսակ մը հաճոյք կը վայելէի:

Աղէկցայ վերջապէս, բայց շատ յամբօրէն. և ատկէց ի վեր է որ ստացած եմ անհոգի, անտարբեր մարդու այն կերպարանքը, որուն համար կը զանգատիք դուք, և որ հաղիւ ինծի կը թոյլատրէ սանկճականջ մը կախիլ որսորդներու սովորական պատմութիւններուն, որոնց սկիզբ տուէր քիչ մը առաջ: Պիտի խոստովանիմ որ բաւական անտարբեր եմ նաեւ նապաստակի կամ ճագարի առաւել կամ նուազ զիպուածական կեանքերուն . . . :

[Մնացեալը յաջորդ քիւով]

ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԲՆԱԾ


Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Գ. Պոլիս, Սուրբան Համան, Թոփալեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկունութեամբ եւ գիներու անմրցելի
աժանութեամբը չհաճ է բոլոր իրեն
դիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց թելոյիններու
եւ տղայոց չիք եւ դիմացկուն փաթիւ-
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,
որ շերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի եւ ուրիշ նմանո-
ւրիշակ պիտոյից:

Օակարկութիւն չկայ, թիւը 2 զըշ. է:
Գաւառներէն յանձնարարութիւնը
փութով կը կատարուին: 50 - 43

الخط الممطور
٢٠٩٠٨٢٢



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵՅԷՔ

ՓՈՒԹԱՅԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեռալ պէյ խանին
օսկ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյանէ,
Զինասանէ, Հնդկասանէ, Ճափաէ եւ Ճա-
բոնէ:

Ամենէն դժուարահասներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտոյն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ւին մեծ եւ փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մարտին:

ԿՈՒՅԷՔ ՍՏԱՆԱԼ ԶԵՐ ՈՒՅԱՇԵՂ ՓՈՍՏԻՆ ԴԱՐՁՈՂ ՈՒ ԱՆՍՈՒԱԼ

ՕՐԷ ՕՐ ԿԸ ՍՕՏԵՆԱՅ

ԳՊՈՑԱԿԱՆ ԼԱԻԱԳՈՅՆ ԴԱՍԱԳՐՔԵՐՈՒ՝ ՈՐՈՒՄ ՎԱՆԵՐԱԳՐԱԾ

ԻՆՉ ԲԱՆԻ ԿՐՆԱՔ ՊԵՏԵՐ ՈՒՆԵՆԱԼ

ԳՊՈՑԱԿԱՆ ԼԱԻԱԳՈՅՆ ԴԱՍԱԳՐՔԵՐՈՒ՝ ՈՐՈՒՄ ՎԱՆԵՐԱԳՐԱԾ
ՊԼԱՆ ՊԱՏ. ՈՐՈՒՄ ԽՈՐԴԵՐԸ:

ՏՆՕՐԷՆ, ԴԱՍՏԻԱՐԱԿ, ՕԳՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՑԵՆԵՐՈՒ՝ ՈՐՈՒՄ ՊԼԱՆ
ՎԿԱՅԵԱՍ, ԱԳԱՐԻԵՍ ՈՒ ՓՈՐՃԱՌԱՌ:

ՍԱՆԿԱՊԱՏԵՋԻ, ՁԵՐԱԳՐՈՐԾԻ ՈՒ ԳԾԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԻԻԹԵՐՈՒ՝
ՈՐՈՒՄ ԳՆՈՂ ԱՄԱՆ ՊԼԱՆ ՈՒ ՏԵՍԱԿՈՂ ԽԱՐԱԳՈՅՆ:

ՏՂՈՑ ՆՈՒԷՐԻ շԱՍԱՐ ԶԱՆԱԶԱՆ ՆԻԻԹԵՐՈՒ՝ ԲՈՒԼՔ, ԳՐԻՅ, ՄԵԼԱՆ,
ԿԱՊԱՄԱՐ, ՄԱՏԻՍ, ԲԱՆԱԿ, ՏԵՐԱԿ, ԲԱՐԻՅ, ԲԱՐԵՍԱԽԱՍԿ,
ԿԱԻՐ, ԳԾԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԱՆԱԳԱՆ ԳՆԻԼԻՐ ԵՆԸ:

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՈՒԷԻ Է ԳՈՐԾԻ ՄԸ. ՎԿԱԿԱՆ, ՎԻՃԱԿԱԳՈՅ, ԲԱ-
ՐԵՆԻՔ, ԱԿԱՏՈՒՄԵ, ԱՅԳԱԲԱՐՏ, ԵՐԱՊԵՐԱԿԱՆ, ԳԱՆԱԿԱԳՐԱԼՈՒ
ԱԿԱՄԱՐԱՆ ԵՆԸ: Ինչ որ ալ ըլլայ սակայն ձեր պէտքը, ցանկէ
անգամ մը ՅՈՂ. ՀԱՆՆԵՍ ԷՍԿԻԵԱՆ ԳՐԱՏԱՆ ԱԿԱՅԻՆԵՐԸ
ՎԵՍԱՆ ԸԼԿԱԿՈՂ ԲԷ՝ ԽԱՐԱՌԱԾ ԿԱՐԻՍ ՊԼԱՆ, ԲԱՆԻ ՈՐ ԵՆՐ ԵՐԿԱՆԻ
ԱՐՔԻՐԱՆ ԱՄԻՆ ԳԵՂԻՄԱԿԻՆԵՐՈՒ ԴԱՍԱԳՐԵՐԸ ԵՆՐ ՈՒ ԵՆՐ ՎԵՐԲ
ՄԸ ԱՆԵԼԳՈՒԾ Է ԲԱՐԻՆ՝ ԵԼՅԱԾ ՏԵՍԱԿԻՆԵՐԱՆ ՎՐԱՅ. Ինչպէս ԳԱՆԻ
ձԵՐԱԳՐՈՒՄ ՄԱՆԿԱԿԱՅԱՏԵԳԻ ՈՒ ՏՐԵՑ ԳԱՆԻՐԻ ԲԱՄԱՐ ԱՌԱՏԱՆ ԳԻՐԸ:

Հարցոցէ՛ր ու անմիջապէս պիտի պատասխանուի
ապարեղեցի՛ ու պիտի ստանա՛ք օրը օրի՛ն

ԼԱԻԱԳՈՅՆ ԳԻՆ ԷՍԿԻՍ. ԳՈՅՆ ԶԵՂ. ԳՈՂ.

ԿԱՆԻՐԻԿ ԳՈՐԾԱՌ. ՆՈՒԹԻՐԻՆ

ԴԻՄԵՆԵՅԷՔ Կ. ՊՈԼԻՍ ԽՈՐԱՄԱՆԵԱՆ ԽԱՆ ՕՀԱՆՆԵՍ ԷՍԿԻԵԱՆ ԳՐԱՏԱՆ

Ա Պ Ա Ռ Ի Կ

Տ ԱՄԻՍ ՊԱՅՄԱՆԱԺԱՄԷՆ ՅԵՏՈՅ ԱՆՊԱՅՄԱՆ ԱՊԱՌԻԿ
5000Է ԱԻԵԼԻ ՏԵՍԱԿ ԻՐԵՂԵՆՔ 5000

Տեղական և Բարիգի 14 և 18 աստիճան ոսկւոյ վրայ բաղմատեալ գոհարեղէններ, օղ, մատնի, ասեղ, եայլն. նաեւ անուէններու սկզբնատառով գոհարապարզ մատանիներ, ոսկի, արծաթ ժամացոյցներ և նորաձեւ շլթայներ, ասոնցմէ զատ ամէն եղանակի յատուկ պատրաստ և չափու վրայ զգեստներ, կօշիկներ ու գլխարկներ, արանց, կանանց և տղայոց համար: Նաեւ մուշամպա, վերարկուներ, բուրգէ և մետաքսէ չլազգեատի կերպասներ, պատրաստ ճերմակեղէններ նաեւ խասա, ամերիգան, պամա, եւայլն. և զարդի վերաբերեալ պիտոյք, մեքենաներ լուացքի, լուսանկարի, կրամօֆօն, ինչպէս նաեւ կարի (ձօնս. Նովման) եայլն:

Ունինք նաեւ եւրոպական նուրբ ճաշակով պատրաստուած կահ կարասիք, հիւրանոցի, ննջասենեակի, ճաշարանի և խոհանոցի վերաբերեալ ամէն իրեղէնք, ամէն տեսակ վառարաններ, նաեւ բաղնիքի, խոհանոցի եւրոպական շարժուն օճախ և լն.:

Վաճառատունս իր տեսակին մէջ միակն է որ չահած է հանրութեան վստահութիւնը, գնահատուած է նաեւ իր ապրանք տուկունութիւնը, նրբութիւնը և աժաւնութիւնը:

ՍՍԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Կանխիկ գնողներու համար հարկւրին 5 ղեղչ

Շաբաթական և ամսական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են:

Հաճեցէք դիմել ՀԵՐԾԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐԶԱՅ ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻԻ 13

50—32



ՐԵԻԵԼՔ ՕՐԱ-

ԹԵՐԹ ազգային, գրական եւ քաղաքական:
— Բաժանորդագրութիւն՝ տարեկան Կ. Պոլսոյ համար 80 դրուշ, գաւառներու համար 108 դրշ: և օտար երկիրներու համար 35 ֆր.:
Զեռքէ վաճառում՝ քաղաքի: Հասցէ՝ Ղալաթիա, Բամանաս փողոց: ԱՐԵԻԵԼՔ հրապարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խորհամեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ԱՐԵԻԵԼՔ, իր վերակազմուած խորհրդագրութեամբ և իր կարող աշխատակիցներ

րով, առաջնակարգ տեղ մը կը զբաղէ տեղական հայ մամուլին մէջ, որ աւուր աւելի հրապուրիչ զառնալով՝ նորանոր բարեփոխումներու շնորհիւ զորս ներմուծած է թերթին մէջ: Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏԱԿԵՐԱԶԱՐԴ ԸՍՏԱՐԻ հանգամանքը, որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար: Ծանօթ Դէմքեր և երբեմն ալ տեսարաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուածները, եկեղեցական, կրօնական, անտեսական-սեղանաւորական, երկրագործական, իրաւաբանական եւայլն, բաց ի զրական, բանասիրական չգրուած քննութիւն, օրուան տեսութիւններէ ու Զուարթնոթիւն, որոնք նիւթերու ճոխ սլէսալիսութիւն մը կը կազմեն: